ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԳՐՔԵՐ

1) Ջաւախեցի, Պատկերներ, I գրքոյկ. Թիֆլիս, 1905, գ. 60 կ.։
2) Բժ. Ա. Բուդուղեան, Նուէր հայ վարժապետին, Ս.-Պետ. 1906, գ. 20 կ.։
3) Գրպանի բառարան (անգլիերէն—հայերէն), պատրաստեց Յովհ. Յակոբեան, Պոստոն, 1905.
4) Ր. Ա. Երան, Նոր գրպանի բառարան կամ գրպանիդ ընկերը, անգլիերէնէ հայերէն, ամերիկահայուն համար պատրաստուած։
5) Դոկտոր Կ. Յ. Փաշայեան—խան՝ Ընդարձակ դպրոցական առողջապահութիւն, պատկերազարդ, ուսուցիչների, աշակերտների և ծնողների համար, Աղէքսանդրիա, 1905։ (679 էջ). բաժանորդագրութեամբ գինն է 2 ռուբլի։ Տպագրութիւնը վերջացրած է։
6) Դասպարեանց, Օժանդակիչ ձեռնարկ Մայրենի լեզուի հայերէն ուղիղ կարդալ ուսուցանելու, Թիֆլիս, 1906 թ., գ. 7 կոպ.։

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՑԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Բժ. Ա. Բուդուղեան, «Նուէր հայ վարժապետին» Ս.-Պետերբուրգ, 1906։ գ. 20 կ.։

Բժ. Ա. Բուդուղեանի այդ բրոշիւրն էլ, ինչպէս նրա ցարդ հրատարակած 35 գրքոյկները, նոյն պակասութիւնն ունի—շատախօսութիւնը և բուն առարկայից դուրս զանազան շեղումները, իրանց վարդապետական-քարոզչական զեղումներով։ Դոկտոր Կ. Փաշայեանի հոյակապ «Ընդարձակ դպրոցական առողջապահութիւն»-ից յետոյ յաժենայն դէպս պ. Բուդուղեանի այս բրոշիւրը գալիս է աւելի քիչ բան տալու դպրոցական առողջապահութիւնից հայ վարժապետին։ Միակ առաւելութիւնը Փաշայանի գրքից՝ էժանութիւնն է. Փաշայեանի մօտ 700 երես ունեցող գիրքը արժէ 2 ռուբլի, իսկ Բուդուղեանի 95 էջանոց բրոշիւրի գինն է 20 կոպ.։ Ով միջոց չունի ձեռք բերելու Փաշայեանի հրատարակութիւնը՝ օգուտ կը ստանայ և այս աւելի համառօտ գրքոյկից։

*